մեծ, և ստիպէին զՀայս տօնել զՋատիկն ընդ ինքեանց։ Իսկ վանականք Երուսաղէմի ոչ առին յանձն, այլ կատարեցին զայն Տօն միով շաբաթաւ յետոյ (1102)։

Իսկ Թագաւորն Երուսաղէմի Բալտուին էառ զԿեսարիա Պաղեստինացւոց աջակցութեամբ Ծերակուտին Գենուայ, ուր 'ի տաճարին Հերովդէի գտին զակն պատուական 'ի չափ ընկուզի միոյ, զոր կոչէին Ֆրանկոս։ Եւ Գենուացի իշխանք առին զայն 'ի վարձ զինուորական ծառայութեանցն՝ և տարան յաշխարհն իւրեանց։

Առին Լատինք զծովեզերեայ քաղաքն Դրիփոլի, որ ասի այժմ Դարպոլոս Շամ, յետ պաշարելոյ զայն ամս 11, և շինելոյ քաղաք արտաքոյ նորին։ Ցառման քաղաքին էր անդ և Թագաւորն Երուսաղէմի Բալտուին։ Եւ իշխանքն կամեցան տալ զայն կոմսին Անտիոքայ Տանկրի, որոյ վասն անկաւ դժուարութիւն մեծ 'ի մէջ Բալտուինի և Տանկրեայ, մինչեւ 'ի սուր մաշել զբնակիչս քաղաքին։ Եւ յետ տարւոյ միոյ առին նաեւ զՊերութ քաղաք (1110)։

Ի խաղալ բազմութեամբ զօրաց զօրավարն Պարսից՝ Մամտուտ 'ի վերայ Երուսաղէմի՝ ել ընդ առաջ նորա Թագաւորն Երուսաղէմի Խաչակիր զօրօք, եւ հասեալ բանակեցան 'ի կողմանս Տիբերեական ծովու, ուր էր բանակն այլազգեաց։ Եւ չ'մնացեալ գալատեան Ռոմէր կոմսին Անտիոքայ և Սինկեղ կոմսին Դրիփոլեայ, որոց աղդ արարեալ էր յառաջագոյն հասանել 'ի Թիկունս։ Աճապարեալ գրգռեաց ըզպատերազմն՝ կամելով ժառանգել զանուն քաջութեան։ Սակայն շարաշար յաղթահարեալ 'ի թշնամեաց, դարձաւ 'ի փախուստ կորանօք։ Բազումք 'ի մեծամեծաց իւրոց անկան տապաստ անդ, և կոտորեցան զօրքն հետեւակ։ Եւ իսկ եւ իսկ հասանէր վտանգ կենաց Թագաւորին, եթէ փոքու ինն չէր հասեալ անդ կոմսին Անտիոքայ և թափեալ զնա 'ի ձեռաց թշնամւոյն։ Ասեն Լատինք՝ թէ 'ի դառնալ այլազգեաց 'ի պատերազմէն՝ դիմեցին եւ ելին 'ի լեառն Թափոր, և թափեցին զյաստուն սրտմտութեան իւրեանց 'ի վերայ կրօնաւորացն քրիստոնէից կոտորելով զնոսա։ Զի 'ի լերինս յայսմիկ էին կառուցեալ վանօրայք երիս 'ի պատիւ Պայծառակերպութեան Տեառն մերոյ յաւուրց անսի Մեծին Կոստանդեայ և Հեղինեայ։ Յորոց